Հավելված
ՀՀ վարչապետի
N 1552 - Ա որոշման

ՑԱՆԿ
«ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ԿԻՐԱՐԿՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

NN ը/կ	Իրավական ակտի վերնագիրն ու տեսակը	Իրավական ակտի նախագիծը ներկայացնելու համար պատասխանատու պետական կառավարման մարմնի անվանումը	Իրավական ակտի նախագիծը ներկայացնելու ժամկետը	Իրավական ակտի ընդունման առնչությամբ իրականացվող միջոցառման ֆինանսական ապահովման աղբյուրը	Իրավական ակտի ընդունման հիմքը
1.	«Շարքային և սպայական կազմերի պարտադիր զինծառայողների կողմից պայմանագրային զինվորական ծառայության անցնելու կարգը, ինչպես նաև այդ զինծառայողներին պայմանագրի ժամկետը լրանալու և (կամ) առողջական վիճակի պատճառով զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչելու հիմքով ժամկետից շուտ պայմանագրային զինվորական ծառայությունից արձակելիս պատվովճար հաշվարկելու կարգը և պատվովճարի չափը սահմանելու մասին» կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը	Պաշտպանության նախարարություն	2023 թվականի հունվարի 3-րդ տասնօրյակ	Լրացուցիչ ֆինանսական միջոցներ չեն պահանջվում:	«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2022 թվականի դեկտեմբերի 7-ի ՀՕ-515-Ն օրենքի 4-րդ և 9-րդ հոդվածներով խմբագրված «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 6-րդ և 63-րդ հոդվածի 4-րդ մասեր
2.	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 2-ի N 1085-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը	Պաշտպանության նախարարություն	2023 թվականի փետրվարի 2-րդ տասնօրյակ	Լրացուցիչ ֆինանսական միջոցներ չեն պահանջվում:	«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2022 թվականի դեկտեմբերի 7-ի ՀՕ-515-Ն օրենքի 8-րդ

					հոդվածով խմբագրված «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 61-րդ հոդվածի 3-րդ մաս
3.	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 16-ի N 1675-Ն և 2018 թվականի ապրիլի 12-ի N 456-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը	Պաշտպանության նախարարություն	2023 թվականի փետրվարի 2-րդ տասնօրյակ	Լրացուցիչ ֆինանսական միջոցներ չեն պահանջվում:	«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2022 թվականի դեկտեմբերի 7-ի ՀՕ-515-Ն օրենքի 3-րդ և 9-րդ հոդվածներով խմբագրված «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ և 63-րդ հոդվածի 4-րդ մասեր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

29.12.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ